

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2013 թվական **թիվ 306** քաղ.Մոսկվա

«Մաքսային միության միասնական մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագրի նախագծի մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրին, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի Կանոնակարգին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հավանություն տալ «Մաքսային միության միասնական մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» կից ներկայացվող համաձայնագրի նախագծին:

2. Խնդրել Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետություններին անցկացնել սույն Որոշման 1-ին կետում նշված՝ Համաձայնագրի ներպետական համաձայնեցում մինչեւ 2014 թվականի մայիսի 1-ը եւ տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին դրա արդյունքների մասին:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
նախագահ

Վ. Խրիստենկո

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Մաքսային միության միասնական մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ մաքսային միություն ձեւավորելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի վրա,

ձգտելով բարենպաստ պայմաններ ստեղծել Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի արդյունավետ գործունեության համար,

հաստատելով իրենց հավատարմությունը «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» 1989 թվականի մարտի 22-ի Բազելյան կոնվենցիայով (այսուհետ՝ Բազելյան կոնվենցիա) նախատեսված միջազգային պարտավորությունների կատարման սկզբունքներին, որի մասնակիցն են Կողմերի պետությունները,

ելնելով իրենց պետությունների ազգային շահերի եւ անվտանգության ապահովման անհրաժեշտությունից,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրով կարգավորվում են Կողմերի պետությունների միջև փոխադարձ առեւտուր իրականացնելիս Մաքսային միության միասնական մաքսային տարածքով այն վտանգավոր թափոնների (այսուհետ՝ թափոններ) անդրսահմանային տեղափոխման հետ կապված հարաբերությունները, որոնք նշված են «Ոչ սակագնային կարգավորման ոլորտում նորմատիվ իրավական ակտերի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշմամբ հաստատված Ապրանքների միասնական ցանկի 1.2 եւ 2.3 բաժիններում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«պետական մարմիններ»՝ Կողմերի պետությունների մարմիններ, որոնք իրականացնում են սույն Համաձայնագրով եւ Կողմերի պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների՝ անդրսահմանային տեղափոխման ժամանակ խախտումների կանխարգելման, հայտնաբերման եւ կանխման գործառույթներ,

«եզրակացություն (թույլատրագիր)»՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման իրավունքը հաստատող փաստաթուղթ,

«հայտատու»՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար իրավասու մարմին դիմում ներկայացրած իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ,

«իրավասու մարմին»՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված՝ Կողմի պետության մարմին,

«թափոնների անդրսահմանային տեղափոխում»՝ Մաքսային միության ապրանքներ հանդիսացող թափոնների ներմուծում եւ (կամ) արտահանում մի Կողմի պետության տարածքից այլ Կողմի պետության տարածք, այդ թվում՝ երրորդ Կողմի պետության տարածքով (ներքին տարանցում), ինչպես նաեւ մի Կողմի պետության տարածքից այդ նույն Կողմի պետության տարածք՝ այլ Կողմի պետության տարածքով:

Սույն Համաձայնագրում գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են Բազելյան կոնվենցիային եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է Կողմերի պետությունների միջեւ փոխադարձ առեւտուր իրականացնելիս թափոնների անդրսահմանային տեղափոխում իրականացնող իրավաբանական անձանց կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց վրա:

Թափոնների անդրսահմանային տեղափոխումը ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար արգելվում է:

Հոդված 4

Կողմերը հսկողություն եւ վերահսկողություն են իրականացնում թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ՝ սույն Համաձայնագրին եւ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Կողմերը չեն թույլատրում թափոնների անդրսահմանային տեղափոխումը դրանց թաղման եւ (կամ) վնասազերծման նպատակով:

Հոդված 5

Թափոնների անդրսահմանային տեղափոխումը, բացառությամբ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով սահմանված դեպքի, իրականացվում է եզրակացության (թույլատրագրի) հիման վրա, որն իրավասու մարմնի կողմից տրվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ հաստատվող միասնական ձեւով:

Եզրակացությունը (թույլատրագիրը) հայտատուին տրվում է Կողմերի պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում:

Թափոնների արտահանման եզրակացությունը (թույլատրագիրը) տրվում է այն Կողմի պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածքից նախատեսվում է դրանց արտահանումը, այդպիսի թափոնների ներմուծման եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում, որը տրվել է այն Կողմի պետության իրավասու մարմնի կողմից, որի տարածք են ներմուծվում թափոնները:

Թափոնների արտահանման եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը ներքին տարանցման դեպքում իրականացվում է սույն հոդվածի երրորդ պարբերության մեջ նշված՝ դրանց ներմուծման եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում, եւ այն Կողմի պետության իրավասու մարմնի կողմից տրված ներքին տարանցման եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում, որի տարածքով նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը:

Եզրակացությունների (թույլատրագրերի) պատճենները կցվում են ապրանքաուղեկից փաստաթղթերի լրակազմին:

Հոդված 6

Մի Կողմի պետության տարածքից այդ նույն Կողմի պետության տարածք այլ Կողմի պետության տարածքով թափոնների անդրսահմանային տեղափոխում իրականացնելու դեպքում եզրակացություն (թույլատրագիր) ստանալ չի պահանջվում:

Իրավաբանական անձը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձը, որը ծրագրում է թափոնների՝ սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված անդրսահմանային տեղափոխում իրականացնել, նախքան դա սկսելը, 60 աշխատանքային օրվանից ոչ ուշ իր պետության իրավասու մարմին է ուղարկում Բազելյան կոնվենցիայի VԱ հավելվածով նախատեսված ծանուցումը՝ դրա ստացման փաստը հաստատելու հնարավորություն ընձեռող եղանակով:

Ծանուցմանը կցվում է թափոնի կազմը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե այդպիսի փաստաթղթի ստացումը նախատեսված է այն Կողմի պետության օրենսդրությամբ, որի տարածքից եւ որի տարածք իրականացվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը:

Այն դեպքում, եթե ծանուցումը կազմված է այն Կողմի պետության պետական լեզվից տարբերվող լեզվով, որի տարածքով նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը, ապա ծանուցմանը պետք է կցվի տվյալ Կողմի պետական լեզվով թարգմանությունը, որը հաստատվում է այն Կողմի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքից եւ որի տարածք նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը:

Այն Կողմի պետության իրավասու մարմինը, որի տարածքից եւ որի տարածք նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը, ծանուցումն ստանալու ամսաթվից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում նշված ծանուցման պատճենը (սույն հոդվածի չորրորդ պարբերության մեջ նշված դեպքում՝ դրա հաստատված թարգմանության պատճենը) ուղարկում է այն Կողմի

պետության իրավասու մարմին, որի տարածքով նախատեսվում է թափոնների անդրսահմանային տեղափոխումը:

Այդպիսի ծանուցման պատճենը (սույն հոդվածի չորրորդ պարբերության մեջ նշված դեպքում՝ հաստատված թարգմանության պատճենը, ինչպես նաև սույն հոդվածի երրորդ պարբերության մեջ նշված դեպքում՝ թափոնի կազմը հաստատող փաստաթղթի պատճենը) կցվում է ապրանքաուղեկից փաստաթղթերի լրակազմին:

Հոդված 7

Այն Կողմի պետության պետական մարմինը, որի տարածք իրականացվել է թափոնների ներմուծումը եւ (կամ) այն Կողմի պետության պետական մարմինը, որի տարածքով իրականացվել է թափոնների անդրսահմանային տեղափոխումը, առանց եզրակացությունների (թույլատրագրերի) թափոնների անդրսահմանային տեղափոխման փաստերի հայտնաբերման դեպքում, ծանուցման բացակայության պայմաններում, ինչպես նաև տվյալ փաստաթղթերում նշված տեղեկությունների՝ այն տեղեկությունների հետ անհամապատասխանություն դեպքում, որոնք ստացվել են թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ հսկողության եւ վերահսկողության իրականացման ընթացքում, իր պետության իրավասու մարմնի միջոցով այդպիսի փաստերի հայտնաբերման ամսաթվից 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է այն Կողմի պետության իրավասու մարմին, որի տարածքից իրականացվել է դրանց արտահանումը:

Հոդված 8

Կողմի պետության իրավասու մարմինը, որի տարածքից իրականացվել է թափոնների արտահանումը, սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված տեղեկություններն ստանալու դեպքում՝

որոշում է ընդունում եզրակացության (թույլատրագրի) գործողության դադարեցման մասին եւ այդպիսի որոշում կայացնելու ամսաթվից 3 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ծանուցում է ուղարկում հայտատուին, որին տրվել էր եզրակացությունը (թույլատրագիրը), այն Կողմի պետության իրավասու մարմին, որի տարածքում իրականացվել էր (նախատեսվում էր իրականացնել) թափոնների ներմուծումը, եւ այն Կողմի պետության իրավասու մարմին, որի տարածքով իրականացվել էր թափոնների անդրսահմանային տեղափոխումը: Այդպիսի ծանուցումը հիմք է հանդիսանում հայտատուին տրված եզրակացությունները (թույլատրագրերը) Կողմերի պետությունների իրավասու մարմինների կողմից անվավեր ճանաչվելու համար,

միջոցներ է ձեռնարկում թափոնների վերադարձման կամ էկոլոգիապես հիմնավորված եղանակով դրանց հեռացման ուղղությամբ:

Հոդված 9

Թափոնների անդրսահմանային տեղափոխման կարգին ներկայացվող՝ սույն Համաձայնագրում չնշված պահանջները, ինչպես նաեւ փոխադրողին եւ վթարային իրավիճակների կանխարգելման ու վերացման, մարդու առողջությանը եւ շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման նպատակով միջոցառումների իրականացման կարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Կողմերի պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 10

Սույն Համաձայնագրով եւ Կողմերի պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման հետ կապված պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը հանգեցնում է պատասխանատվության՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

Այն Կողմի պետության իրավասու մարմինը, որի տարածքից իրականացվել է թափոնների արտահանումը, տարին մեկ անգամ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 20-ը, սույն Համաձայնագրի հավելվածի համաձայն սահմանված ձևով (էլեկտրոնային փոստով) հաշվետու ժամանակաշրջանում տրամադրված թափոնների արտահանման եզրակացությունների (թույլատրագրերի) վերաբերյալ տեղեկություններ է ուղարկում այն Կողմի պետության իրավասու մարմին, որի տարածք են ներմուծվել թափոնները:

Հոդված 12

Կողմերը միմյանց եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում են իրենց պետությունների իրավասու մարմինների մասին:

Դրանց փոփոխման դեպքում Կողմերն անհապաղ դրա մասին դիվանագիտական ուղիներով տեղեկացնում են միմյանց եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:

Հոդված 13

Կողմերի միջեւ ծագող՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով, իսկ խորհրդակցություններ ու բանակցություններ անցկացնելու վերաբերյալ մի Կողմից մյուս Կողմերին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճը հանձնվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 14

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Կատարված է _____ քաղաքում, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի

Ղազախստանի

Ռուսաստանի

Հանրապետության

Հանրապետության

Դաշնության

Կառավարության կողմից

Կառավարության կողմից

Կառավարության կողմից

